ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԶԱՐԴԵՐ

Ա.թ.ա. VI-IVդդ. հայկական զարդագործության դիապազոնի մասին պատկերացում են տալիս բազմաթիվ և բազմատեսակ ապարանջանները, մանյակները, ականջօղերը, կախիկները, շիգղերը, մատանիները, հուլունքները և այլն:

Քննարկվող հայկական զարդերը հարուստ են ոչ միայն տեսակներով, այլև պատրաստման նյութով և տեխնիկական հնարներով: Դրանք պատրաստված են մետաղից՝ բրոնզ, երկաթ, ծարիր, արծաթ, ոսկի, քարից, ոսկորից, խխունջից, կավից, շաղախից, ապակուց և այլն:

ԱՊԱՐԱՆՋԱՆՆԵՐ: Ըստ պատրաստման նյութի գտնվել են բրոնզե, արծաթե և երկաթե: Վերջիններիս թիվը սահմանափակ է: Դրանք կտրվածքում կլոր, փակ օղեր են,բացի Աստղի բլուրի նմուշից, որը երկաթե թիթեղ է, բաց ծայրերով:

Արծաթյա ապարանջաններ հայտնաբերվել են Աթարբեկյանից, Ջուլֆանից, Ջրառատից:

Քննարկվող ապարանջաններն իրենց ուրվագծով և պատրաստման տեխնիկայով բաժանվում են երեք խմբի՝ լարային, ժապավենային և զանգվածեղ ձուլածո: Առաջինները պատրաստված են կտրվածքում կլոր կամ կիսակլոր լարերից, կռելու, կտրելու, ձև տալու և հարդարելու միջոցով: Նույն ձևով մետաղե լայն կամ նեղ թերթիկներից պատրաստված են երկրորդ խմբի ապարանջանները, իսկ երրորդ խմբինը ամբողջական ձուլված են կաղապարի մեջ: Երբեմն հանդիպում են լարային ապարանջաններ, որոնց ծայրերը ծեծված են և դարձված ժապավենային: Երեք խմբերը ձևավորման և հարդարման տարրերով կազմում են մի քանի տարատեսակներ: Ամենաառատը լարային պարզ օղակաձև, հեռացած, իրար մոտ կամ վրա եկած ծայրերով ապարանջաններն են:

Դրանք երբեմն կրում են փորագիր, իրար զուգահեռ, խաչաձևվող, գծիկներից կազմված կամ պարանահյուս զարդեր և մեծ մասամբ հարում են նախորդ՝ երկաթի լայն տարածման դարաշրջանի ապարանջաններին (աղ. 46,1-4):

Այս ապարանջանների մի մասը առանձանում է ծայրերի կենդանակերպ ձևավորմամբ: Պատկերվող կենդանին հիմնականում օձն է, որի աչքերը, բերանի բացվածքը շեշտվում, ընդգծվում են փորագրման տեխնիկայով: Գլխիկի և ապարանջանի իրանի միացումը երբեմն առանձնացվում է, իսկ մեծ մասամբ՝ ոչ: Առանձին արտահայտչականություն և գեղեցկություն ունեն Իջևանի, Բերդի, Արին բերդի այն ապարանջանները, որոնց իրանի կիսակլոր լարը ծայրերում տափակեցված է և ապա նորից նեղացված և ավարտված հարթ կտրված եզրով: Հարթեցված մասը զարդարված է փորագիր գծիկներով և կրում է Բերդի օրինակների վրա երկու զույգ, Իջևանի օրինակների վրա՝ մեկ զույգ արտահայտիչ աչքեր՝ ստեղծելով «ակնոցավոր օձի» տպավորիչ պատկերը (աղ. 46, 5, 6, 8, 10):

Ա.թ.ա. VI-IVդդ. լարային ապարանջանների մի մասն ունի մեկ բնորոշ առանձնահատկություն՝ կենտրոնական մասի ճկվածություն: Ներճկված ապարանջանները մ.թ.ա. Vդ. լայնորեն տարածվում են աքեմենյան մշակույթի ոլորտն ընդգրկված երկրների նյութական համալիրներում, դառնում թվագրող տարր դրանց համար և, ինչպես ժամանակին ճիշտ նկատել է Կուֆտինը (136, էջ 33: 139, էջ 38), հելենիստական ժամանակաշրջանում իր նախահայրենիքում անհետանալով, շարունակում են լայնորեն օգտագործվել Վրաստանում, մինչև I դարերը: Այս միտքը վերաբերում է Հայաստանին և ընդհանրապես ողջ Անդրկովկասին: Ներճկված իրանով ապարանջանների մի մասն ունեն օձագլուխ ծայրեր, որոնց մոտ մ.թ.ա. I հազարամյակի սկզբներից եկող զարդարման ավանդական տեխնիկան միացած է իրանի նոր ձևին: Արանց մոտ հանդիպում են որոշակի ձևավորված, ճշգրիտ մանրամասներով կերտված և խիստ ոճավորված, երբեմն մեկ տարրով, մեկ գծիկով օձի գլխիկ հիշեցնող օրինակներ (աղ. 46, 7, 9, 14): Հանդիպում են ապարանջաններ, որոնց ծայրերի կենդանական գլխիկների փոխարեն արված են գնդեր, քառակուսի կամ բրգաձև հաստացումներ: Արանց թիվը մեծ չէ՝ երկուսը հայտնաբերվել են Ռեդկին լագերից, հինգը՝ Շամշադինի շրջանի Դրղի գյուղից (աղ.

46, 12): Ապարանջանի իրանը նման ձևով հարդարելու սովորությանը մենք հանդիպում ենք նաև հելենիստական ժամանակաշրջանում (Կարմիր բլուրի դամբարանադաշտ - 83, էջ 18): Իրանի վրա հաստացումներ ունեցող ներճկված ապարանջանների ամենազանազան տարատեսակները հայտնի են Վրաստանի և հյուսիսային Կովկասի հուշարձաններից և թույլ են տվել Կուֆտինին նույնիսկ առանձնացնելու մի քանի տարատեսակ (136, էջ 34, նկ. 9: 139, աղ. 12): Սակայն Հայաստանում այս տեսակը լայն տարածում չի գտել: Եղածը թվագրվում է միայն մ.թ.ա. V-III դարերով: Դրանց առկայությունը հավանաբար պետք է բացատրել առևտրական կապերով կամ հյուսիսից եկող ազդեցությամբ:

Լարային ապարանջանների մյուս դրսևորումներից են ոլորուն ապարանջանները: Հայտնաբերվել են Բերդից, թվագրվելով մ.թ.ա. V-IVդդ., Արմավիրից և Գեղադիրից (29, էջ 91), որոնք թվագրվում են մ.թ.ա. IVդ. վերջ, IIIդ. սկզբով: Ավելի ուշ դրանք լայն տարածում են գտնում, իսկ միջնադարում դառնում շատ բնորոշ: Ոլորուն լարերից զարդեր, մատանիներ, մանյակներ, պաարանջաններ պատրաստել են ավանդաբար շատ հնուց: Նման զարդերից հնագույնները հայտնի են Արթիկի ուշ բրոնզեդարյան դամբարաններից (218, էջ 217, նկ. 128): Ոլորուն իրաններով ապարանջաններ հայտնի են Նորադուզի դամբարաններից (154, աղ. XX, 16), իսկ վերջնական ձևավորվում են երկաթի լայն յուրացման դարաշրջանի համալիրներում՝ Խրտանոց, Արգիշտիխինիլի (156, նկ. $85_{1\,2}$): Երկաթի դարաշրջանի այս ապարանջանները պատրաստվում են կտրվածքում կլոր, մեկ լարը ոլորելու եղանակով: Այս եղանակով է պատրաստված նաև Բերդի ապարանջանը, որն ունի մի տարբերիչ գիծ: Նրա մի ծայրում արված է փոքրիկ բուն, ուր ագուցվել է մյուս ծայրը (աղ. 46, 11): Արմավիրի և Գեղադիրի ապարանջանները պատրաստված են մեկ լարին մյուս երկուսը փաթաթելու եղանակով (աղ. 46, 13): Եվ Գեղադիրի օրինակը, որի պատրաստման ժամանակ օգտագործել են երկաթե և բրոնզե լարեր, լինելով երկգույն, ունեցել է մի առանձին հնչեղություն: Այս երկմետաղ լարերի ոլորման տեխնիկային հանդիպում ենք արդեն ուրարտական ժամանակաշրջանում, մ.թ.ա. VII-VIդդ. սահմանագլխին՝ Իգդիրի նյութերում (137, աղ. V, 7): Ոլորուն ապարանջաններ հանդիպում են նաև հելենիստական ժամանակաշրջանում Գառնիում, Արտաշատում: Դրանք լայնորեն հայտնի են աքեմենյան մշակույթին, գտնվել են Պերսեպոլսում՝ խոյագլուխ ծայրերով (271, աղ. 49_3, 89_2), Կիպրոսում և այլուր: Մի առանձին հետաքրքրություն են ներկայացնում կիսակլոր լարից, երկու, երեք և չորս տակ ծալելու եղանակով պատրաստված ապարանջանները (աղ. 47, 1, 3, 4): Այս եղանակով երկտակ ծալված ապարանջաններ հայտնի են մ.թ.ա. VIII-VIIդդ. թվագրվող Մուխանի, Լենինականի, Բասարգեչարի, ապա մ.թ.ա. VII-VIդդ. Խրտանոցի համալիրներից (154, էջ 234, նկ. $110_{5,6}$; 151, աղ. XVI, 3): Մ.թ.ա. VI-IVդդ. թվագրվող Աստղի բլուրի դամբարաններից և հատկապես բնակավայրից հայտնաբերված եռալար և քառալար ապարանջանները ապացույց են դրանց պատրաստման տեխնիկայի զարգացմանը: Զարգացում է նկատվում նաև դրանց հարդարման տարրերում: Եթե վաղ ժամանակաշրջանի նմուշները զանգվածեղ են, անզարդ, ապա մ.թ.ա. VI-IVդդ. թվագրվողները պատրաստված են ավելի նուրբ լարերից, առաջին հայացքից թվացող կոպտությանը ունեն որոշակի նրբագեղություն և զարդարուն են: Մի դեպքում լարի ծայրերը ոլորած են իրար հակառակ կողմերի վրա, առաջացնելով «աչքավոր օձի» պատկերը (աղ. 47, 4), մյուս դեպքում ուղիղ ծայրերը ավարտվում են հասկաձև զարդով և այլն (աղ. 47, 1); ժապավենային ապարանջանների թիվը մեծ չէ: Այդ ապարանջանները պատրաստված են տարբեր լայնության (1-4սմ) բարակ թերթիկներից: Դրանց բաց ծայրերը, որոշ նմուշների մոտ, թեթևակի նեղանում և սրվում, մեկ այլ դեպքում՝ լայնանում են: Բոլորը կրում են փորագրման տեխնիկայով կատարված զարդեր՝ ապարանջանի երկարությամբ ձգված ուղիղ գոտիներ, երբեմն լցված եղևնազարդով երբեմն ոչ, գագաթներով իրար միացած եռանկյունիներ, կենտրոնում կետով շրջանակ՝ աչքեր, ալիքներ, խաչաձևվող գծիկներ: Զարդերը հիմնականում կենտրոնացած են ապարանջանների ծայրերին և հորինվածքով իրար են ուղղված (աղ. 46, 8, աղ. 47, 2, 5):

Զանգվածեղ ծուլածո ապարանջանները կտրվածքում կլոր և կիսակլոր են, իրանները հարթ, ծայրերը երբեմն ուղիղ կտրված, երբեմն նեղացած և կրում են փորագիր գծազարդ: Մյուս մասի ծայրերը տափակեցված են և ունեն ալիքաձև ավարտ, կրելով փոքր գծիկներից կազմված եղևնու զարդամոտիվը (Աթարբեկյան, Զրառատ): Բավական շատ են նաև ծայրերը ոճավորված օձի գլխիկի նմանեցրած նմուշները: Բոլոր այս տարատեսակների մոտ հանդիպում են իրանները մանր փորվածքներով կամ գծիկներով զարդարված նմուշներ (աղ. 47, 6, 8, 10): Ապարանջանների մի փոքրիկ խումբ

էլ կրկնում է վաղ ժամանակաշրջանի, փակ իրանները փոսիկներով զարդարված ապարանջաններին (աղ. 47, 7): Պետք է նշել նաև Իջևանի և Աթարբեկյանի դամբարաններից գտնված զանգավծեղ ծանր ապարանջանները, որոնք այս դարաշրջանում, հավանաբար վերապրուկային են: Ձուլածո ապարանջանների վերը քննարկված բոլոր ենթախմբերն իրենց առատ նախատիպերն ունեն մ.թ.ա. VIII-VIդդ. թվագրվող նյութերում (8, էջ 87, աղ. $3_{3,4,5}$, էջ 89, աղ. 2_4):

Առանձին և հետաքրքիր խումբ են կազմում Աստղի բլուրից և Կուրթանից հայտնաբերված երեք բացառիկ նրբագեղ, *ձուլածո ապարանջանները*: Դրանք բաց ապարանջաններ են, որոնց ծայրերը ավարտվում են խոյի գլխիկների պատկերներով: Սրադունչ, փորագրությամբ նշված աչքերով ու բերանով, ոլորուն եղջյուրներով գլխիկը ապարանջանի ծողից առանձնանում է լայնակի շարված ուռուցիկ գոտիներով, իսկ իրանը զարդարված է կետերով և գնդիկներով (աղ. 47, 9): Այս ապարանջաններից մեծ թվով հայտնաբերվել են Բեշտաշենի դամբարանադաշտից, որոշակիորեն թվագրվելով մ.թ.ա. V-IVդդ. (160, աղ. $XIII_{419, 429}$); գտնվել են Դոլանլարից (164, էջ 63), Պերսեպոլսից, որի իրանը ոլորուն է, Կիպրոսից (271, աղ/ 89_2, 49_3; 227, էջ 29, նկ. 11-12) և բոլորն էլ թվագրվում են այդ նույն դարերի սահմաններում: Ուստի Որնակից հայտնաբերված և էրմիտաժում պահվող նույնատիպ ապարանջանը ևս պետք է թվագրել այս դարերով: Վաղ նյութերի մեջ դրանք բացակայում են, իսկ հելենիստական ժամանակաշրջանի խոյագլուխ ապարանջան առայժմ հայտնաբերվել է միայն Թալինի շրջանի Բազմաբերդ գյուղից և ունի պարզ արտաքին (3, էջ 221-222): Խոյագլուխ ապարանջանների Աստղի բլուրի օրինակները գտնվել են պաշտամունքային շենքում, ծիսական նշանակության բազմաթիվ առարկաների, խոյի եղջյուրներով հարդարված տաճարների մանրակերտերի միջավայրում: Այս ամենն ընդգծում են դրանց ծիսական պաշտամունքային նշանակությունը, կապը աստրալ թեմատիկայի հետ: Կենդանակերպ ապարանջանները և մյուս զարդերը, որոնց հայրենիքը ընդունված է համարել Առաջավոր Արևելքը, հետապնդել են նաև պահպանիչ և բուժիչ նպատակներ:

ՍԱՏԱՆԻՆԵՐ: Հուշարձաններից հայտնաբերված բազմաթիվ մատանիները ապարանջանների նմանությամբ պատրաստված են երկաթից, արծաթից և բրոնզից: Առաջին երկու մետաղներից պատրաստված նմուշները շատ քիչ են: Հիմնականում դրանք բրոնզից են: Պատրաստման եղանակով և արտաքին տեսքով լարային են կամ ժապավենային: Բրոնզե լարից պատրաստված մատանիները հանդիպում են փակ, բայց և իրար վրա եկած ծայրերով: Ծայրերը բարակ են, երբեմն ծեծված-հարթեցված, իրաններն անզարդ են և զարդարուն: Հիմնական զարդանախշը մատանու իրանով շարված շեղ փոսիկներն են, գծիկները և ուժեղ կամ թույլ արտահայտված ատամնավոր արտաքին ձևավորումը (աղ. 48, 1, 5, 9, 12, 16) Զրառատի և Կարճաղբյուրի մատանիների մեջ հանդիպում են մեկական նմուշ, որոնք ունեն լարի երկու կողմից հեռացող եռանկյուն ելուստներ, թեթևակի հիշեցնելով վահանիկ (աղ. 48, 21): Հանդիպում են նաև մատանիներ, որոնց իրար վրա եկած ծայրերից մեկն ավարտվում է ոճավորված օձի գլխով, հետևելով ապարանջանների հարդարման սովորույթին: Լարային մատանիների առանձին ենթախումբ կարելի է դիտել լարը կրկնածալելու միջոցով ստացվող մատանիները (աղ. 48, 2, 6): Գեղեցիկ տեսք ունեն ոլորած լարից պատրաստվածները (աղ. 48, 10), որոնք նույն տեխնիկայով պատրաստված ապարանջանների նման, լայն տարածում են ստանում Հայաստանում այս դարաշրջանում: Ժապավենային թերթիկ մետաղից կտրված մատանիները ևս հանդիպում են փակ, բաց և իրար վրա եկող ծայրերով: Բացառությամբ մի քանի օրինակների, բոլոր մատանիները զարդարված են փորագրման տեխնիկայով արված նախշերով: Հանդիպում են թեք գծերով ստեղծված եղևնանախշը, գագաթներով իրար ուղղված եռանկյունիներ, կետազարդ օղակներ՝ աչքեր, ալիքներ և այլն (աղ. 48, 3): Հետաքրքիր են թերթիկը պարույրաձև փաթաթելու եղանակով պատրաստված քառածալ մատանիները (աղ. 48, 7):

Քննարկվող մատանիները, որոնք շարունակում են հարատևել նաև հելենիստական ժամանակաշրջանում, հանդիպում են թե՛ աշխարհագրական, թե՛ ժամանակագրական լայն տարածքում: Դրանցից հայտնաբերվել են մ.թ.ա. VIII-VIդդ. թվագրվող Սևանի ավազանի, Լենինականի, Գոլովինոյի ու այլ հուշարձաններից (20, էջ 179, նկ. 151, 152: 154, նկ. $110_{9,8,10\ 12}$: 151, աղ. VI):

ԱԿԱՆՋԻ ԵՎ ՔՈՒՆՔԻ ՕՂԵՐ: Վաղ հայկական ժամանակաշրջանի ականջօղերի մեծ մասը կլոր, պարզ լարից պատրաստված օղեր են, որոնք երբեմն չեն տարբերվում մատանիներից, կամ էլ տարբերվում են միայն տրամագծի չափերով (աղ. 48, 11, 14): Դրանց մեջ հանդիպում

են նաև կախիկներով հարդարված օրինակներ: Որպես կախիկներ ծառայել են հուլունքները, կաորիները, գալարուն օղակները, իսկ մի դեպքում էլ՝ հատուկ երկու փոքրիկ կիսաբասիկներից պատրաստված գնդիկը (աղ. 48, 4, 8): Այս կախիկավոր ականջօղերը ավելի առատ հանդիպում են հելենիստական զարդերի մեջ:

Կարճաղբյուրի և Աթարբեկյանի դամբարաններից գտնվել է օղերի մի տեսակ, որի ասեղը կոնստրուկցիայով չի առանձնանում կախվող մասից: Վերը քննարկված կլոր օղերի նման միասնական է, սակայն ստորին մասի նկատմամբ հորիզոնական դիրքով: Ստորին մասն իր հերթին, դեպի կենտրոն աստիճանաբար հաստանում է (օղաբլիթի ձևով) առաջացնելով որոշ գեղարվեստական էֆեկտ (աղ. 48, 13):

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում Ջրառատի սալարկղից գտնված օղերը: Դրանք կտրվածքում կլոր լարից են, որոնցից հավասար հեռավորության վրա ամրացված, եռակցված են հատիկներից կազմված երեքական ողկույզներ, ականջօղին տալով արտակարգ գեղեցիկ տեսք (աղ. 48, 20): Այս օղերի ակունքները գնում են հինարևելյան զարդագործության աշխարհը և հանդիպում են ուշ ասորեստանյան հարթաքանդակների պատկերներում (201, էջ 66, նկ. 3): Դրանք լայն տարածում են գտնում Անդրկովկասում և Հայաստանում մ.թ.ա. VI-IV և հետագա դարերում, ինչպես ցույց են տալիս Վանիի, Կվիրիլիի կիրճի հուշարձաններից, Ամնգեչաուրից հայտնաբերված նմուշները (147, նկ. 40, 41; 170, աղ. 17; 75, աղ. 1, 7): Քննարկվող ժամանակաշրջանում հանդես է գալիս օղերի մի տեսակ ևս, որը լայն տարածում է գտնում հետագա դարերում: Դրանք ստեղծվել են միակտոր լարից, որը մի ծայրից կեռվելով՝ օղակ է առաջացրել և ոլորվելով փաթաթվել օղի աղեղին, տալով նրան գեղեցիկ տեսք: Մյուս սուր ծայրն ագուցվել է ստեղծված օղակի մեջ: Այս օղերից առայժմ հայտնաբերվել են Կարճաղբյուրի մ.թ.ա. VI-IV դդ. դամբարաններից (աղ. 48, 17):

Ականջօղերի քննարկումից պարզվում է, որ դրանց զարգացումը կապված է ստորին աղեղի վրա տարբեր տեսակի կախիկների ամրացման հետ, քանի որ վերին մասը՝ ասեղը, երկար ժամանակ պահպանում է իր սկզբնական կլոր ձևը: Միայն Կարճաղբյուրի և Աթարբեկյանի օրինակների մոտ է երևում ասեղի զարգացում՝ դառնալով հորիզոնական: Սա նոր ձև է, որ լայն տարածում պետք է գտներ հետագայում, հատկապես միջնադարյան զարդագործության մեջ:

Քննարկվող հուշարձաններից քունքի օղեր քիչ են հայտնաբերվել: Շարունակում են հանդիպել նախորդ դարերում տարածված քունքի օղերի մի տեսակը, որը ծուլածո, միջին մասում հավասարաչափ հաստացող օղ է, որի ծայրերը դեպի դուրս կլորանալով՝ օղակների են վերածվում: Փոքր չափերի մեջ կրկնում են մանյակների ձևը (տրամագծերը տատանվում են 4-5սմ-ի միջև - աղ. 48, 18, 19): Դրանցից մեկի մոտ պահպանվել է երկաթե լարը, որը միացրել է ծայրի օղակները և այս տարրը թույլ է տվել Իվանովսկուն դրանք համարել քունքի օղեր (116, էջ 83, 96, 98, 125): Իջևանում այս օղերի հետ գտնվել է նույնատիպ մանյակ՝ առաջացնելով լրակազմ:

Հուշարձաններից հանդիպող քունքի օղերի երկրորդ տարատեսակը կտրվածքում կլոր մետաղալարից պատրաստված տարբեր տրամաչափերի օղեր են, որոնց ծայրերն ունեն թռչնի գլխիկի ձև և կրում են մեկական անցք (աղ. 48, 8, 15): Օղերից կախված են լինում տարբեր ձևերի և կազմության կախիկներ, որոնցից ամենատարածվածը ծայրերին հատիկներից կազմված բուրգեր ունեցող լար-ճառագայթներ կամ եռանկյունաձև թերթիկներն են: Գտնվել են Մակարաշենից (պատրաստված ծարիրից, կախիկները կորած են), Անանի ավազանից (բրոնզից), Նախիջևանից մեկ ճառագայթով (արծաթից): Այս քունքի օղերը ողջ Անդրկովկասում հանդես են գալիս մ.թ.ա. VII-VIդդ. սահմանագլխին և լայնորեն տարածվում մ.թ.ա. VI-IVդդ. և ավելի ուշ: Հայտնի են Կազբեկի գանձից (211, էջ 34, աղ. LXIV, 3), Վրաստանի հուշարձաններ Թրիալեթիից, Աուխումիից (136, նկ.. 40, 42), Իկոտիից, Վանիից, Աաչխերիից (90, աղ. V, 32, 33, 34, 39), Ադրբեջանի տարածքից՝ Կապաղակից, Ամնգեչաուրից (75, աղ. I, նկ. 1,4): Հայաստանում ևս քունքի օղերը երևան են գալիս այդ նույն ժամանակաշրջանում և հայտնաբերվել են Լոռիի, Օշականի (97, էջ 188, նկ. 14; 110, աղ. LXIX, 8) դամբարաններից: Ուշ անտիկ ժամանակաշրջանում դրանք դուրս են գալիս գործածությունից, ինչպես երևում են թե՛ Հայաստանի, թե՛ Վրաստանի հուշարձաններից: Ելնելով Վրաստանի հուշարձաններում այս քունքի օղերի առատությունից, Տ.Ն.Չուբինիշվիլին դրանց տարածումը սահմանափակում է Արևելյան Վրաստանի և Քարթլայի սահմաններով, որը, ինչպես տեսանք վերը բերված նյութերից, չի համապատասխանում իրականությանը և դրանց աշխարհագրական սահմաններն ավելի ընդարձակ են:

ՍԱՆՅԱԿՆԵՐ: Քննարկվող ժամանակաշրջանում շարունակել են պատրաստվել նախորդ դարերի համար բնորոշ մանյակների տեսակները: Հայտնաբերվել են թե՛ կլոր լարից պատրաստված, հարթ արտաքինով մանյակներ, որոնց նախատիպերը հանդես են գալիս դեռևս Լցենի, Ռեդկին լագերի, Նորադուզի մ.թ.ա. X-IXդդ. համալիրներում, թե՛ մ.թ.ա. VII-VIդդ., ոլորուն լարից ստեղծված տեսակները (151, աղ. VII, 7, XIII, 33, XVI, 11, 12, 13, 97, էջ 188; 255, էջ 105, աղ. 68): Երկու տեսակների ծայրերը մեկ կամ երկու կողմով, որպես կանոն, ավարտվում են կեռիկներով, կապելու համար (աղ. 49, 1, 2): Վաղ հայկական մանյակների զարգացման միտումը նկատվում է դրանց ծայրերի ձևավորման մեջ: Մանյակների ծայրերը տափակեցված են զարդանախշված փորագրմամբ կատարված զարդերով: Զարդամոտիվները բազմազան են՝ մեկ կամ երկշարք եղևնազարդ (Բերդ, Զրառատ), եզրերով ծգվող, շեղ գծիկներից կազմված գոտի կամ կենտրոնով շարված աչքազարդ, որոշ դեպքերում առնված ծաղկաշղթայի մեջ (աղ. 49, 3, 5): Զարգացում է նկատվում նաև տեխնիկայի մեջ: Ոլորմամբ մանյակներ պատրաստվում են նաև քառակող լարերից: Մանյակները Անդրկովկասում ևս - հանդես են գալիս այդ նույն ժամանակաշրջանում, ինչ որ Հայաստանում: Դրանցից հայտնաբերվել են Ախալգորիի գանձի մեջ, Վանիից, Իթխվիսիից, Մինգեչաուրից և այլն (192, N 14: 147, էջ 215-216; 89, էջ 32):

Դատելով Այրումի գանձի կանանց արձանիկներից, Հայաստանում հավանաբար օգտագործվել է մանյակների մեկ այլ տեսակ, որը ներկայացրել է վզին հագցվող կլոր օղակ և դրանցից տարբեր հեռավորության վրա շարված կախիկներ: Այրումի կանանց արձանիկների մոտ դրանք երեքական բավական զանգվածեղ եռանկյունաձև կախիկներ են: Որպես նման մանյակների կախիկներ, կարող էին ծառայել նաև տարբեր ձևերի այն կախիկները, որոնք հայտանբերվում են զարդերի համալիրներում և հենց Այրումի գանձի մեջ գտնված՝ գայլերի, ձիերի և շների այն արձանիկները, որոնց մեջքերին առկա են այդ նպատակին ծառայող օղակներ աղ. (49, 6-10, 11): Այդ դեպքում կունենայինք Պիցենյան (Իտալիա) մանյակներին հար և նման վզնոցներ (82, էջ 29, նկ. 1, 2):

ԿՐԾՔԱԶԱՐԴ ԿԱԽԻԿՆԵՐ: Զարդարանքի այս խմբի մեջ ընդգրկվում են կիսալուսնաձև և տարբեր տեսակի մյուս կախիկները:

Կիսալուսնաձև կամ մահիկաձև կախիկները մեծ մասամբ պատրաստված են բրոնզե կամ արծաթե թիթեղից, պայտաձև կտրելու եղանակով: Կան անզարդ (Բերդ, Աստղի բլուր) և զարդարուն (Զուջևան) օրինակներ: Հարդարանքը կատարված է դրվագմամբ, հիմնական մոտիվը կետագծերը և կետերով ստեղծված վարդյակներն են (աղ. 50, 2, 3, 4):

Մահիկաձև զարդերի մեջ առանձին տեղ է գրավում Արմավիրի ոսկյա կրծքազարդը (երկ. 3 սմ, լայն. 2,7 սմ): Այն ունի արտակարգ զարդարուն արտաքին, եզրերն ավարտվում են հակառակ կողմեր նայող թռչունների իրաներով: Թռչունների միջև տեղադրված են երեք կենաց ծառի պատկեր, որոնք եզերված են եռանկյունիներով լցված նեղ շերտերով՝ խորհրդանշելով սրբազան պուրակ: Կրծքազարդի ստորին աղեղն ավարտվում է իրար հաջորդող ծաղկի և կոկոնի պատկերներով: Ողջ զարդը պատրաստված է ցանցկեն տեխնիկայով և միջնորմներով առաջացած բջիջները ընդելուզված են եղել գունավոր քարերով և երկնագույն, սև ապակե մածուկով աղ. 50, 5): Այս կրծքազարդը ձևով, հարդարման տարրերով իր նախատիպերն ունի Ուրարտուի կրծքազարդերի մեջ, իսկ գեղարվեստական զարդարմամբ, պատրաստման եղանակով, վերաբերվում է աքեմենյան մշակույթի ոլորտին (203, էջ 190-191), որտեղ առաջավորասիական, միջագետքյան ընդելուզման տեխնիկան հասնում է իր զարգացման գագաթնակետին: Մյուս կողմից նրա գեղարվեստական և ոճական յուրահատկությունները և նյութի վերլուծումը տարակույս չեն թողնում, որ այն ունի տեղական ծագում (70, էջ 163):

Այս կախիկների շարքում կարելի է քննարկել Կարճաղբյուրից հայտնաբերվածը, որը խիստ ոճավորված է և կենտրոնական մասից հեռացող ճյուղերը հիշեցնում են ձիու գլխիկներ (աղ. 50, 1): Իրաններով միացած զույգ կենդանիների պատկերներով կախիկներն ունեն ժամանակագրական և աշխարհագրական լայն շրջանակներ և ունիվերսալ բնույթ, համարվում են երկվորյակների պաշտամունքի արտացոլում (115, էջ 88: 144, էջ 113): Այս ենթախմբի հետ կարելի է քննարկել սեղանաձև և եռանկյունաձև կախիկները (աղ. 50, 8): Այս տեսակը կիսալուսնաձև կախիկների նման, ըստ երևույթին, ծագում են ասորեստանյան ռազմապաշտպանական նպատակներին ծառայող ուղղանկյուն կամ սեղանաձև կրծքազարդերից (203, էջ 193), որոնք մ.թ.ա. VI-IVդդ. չափերով խիստ փոքրանում են և դառնում հմայիլ-պահպանակներ:

Կախիկ-կրծքազարդերի *մյուս տեսակը* կլորավուն է, պատրաստված բրոնզե թերթիկից, տարբեր չափերի և հարդարման տարբեր տարրերով: Շատ հետաքրքիր են Իջևանից գտնված նմուշները, որոնց ներքին տարածքը լցված է ծաղկապսակ կազմող չորս շրջանակներով (տրամ. 4 սմ, աղ. 50, 9): Խաչաձև միջուկ ունի նաև Խրտանոցի կրծքազարդը, որի շրջանակի եզրերը ատամնավոր են: Նման կրծքազարդեր, միայն առանց խաչաձև միջուկի, գտնվել են Գոլովինոյում (151, էջ 24, աղ. $VI_{9, 10}$): Նույն ժամանակաշրջանով թվագրվող կրծքազարդեր հայտնի են Մինգեչաուրից, Դոլանլարից, Ռեղկին լագերից, Կեդաբեկից (213, էջ 7: 164, էջ 67, աղ. III, 3), որոնք խոսում են դրանց տեղական արտադրանք լինելու մասին:

Հաջորդ կլորավուն կախիկները Նորաշենից են, չափերով շատ փոքր (տրամ. 2,1-3,2): Երկուսը կրում են չորսական անցքեր, որոնց միջև կարծես ընթերցվում է խաչը (աղ. 50, 6), իսկ երրորդի ամբողջ տարածքը հարդարված է երեքական զուգահեռ կետագծերով ստեղծված ռիթմերով, որոնք կենտրոնում կարծես կեռխաչ են կազմում (աղ. 50, 7): Այս բոլոր կրծքազարդերը դասվում են արևը խորհրդանշող, արևի պաշտամունքի հետ կապված հմայիլների շարքը (103, էջ 253-255):

Հնագույն ժամանակներից մ.թ.ա. VI-IVդդ. մշակույթին են անցնում կլոր, կոնաձև և հատած կոնի ձևով պատրաստված *զանգակ-կախիկները բոժոժները*, որոնք օգտագործվել են ծիսական արարողությունների ժամանակ և որպես աղմկող առարկաներ, որոնցով ցրել, հեռացրել են չար ուժերը: Զանգակները նաև ծիսարքի անքակտելի մասն են կազմել և ունեցել են թե՛ պահպանակի, թե՛ զարդի նշանակություն (աղ. 50, 10, 11, 17, 18): Առատ են պտղի, բեղմնավորման, արգասավորության գաղափարի հետ կապված կախիկները, որոնք հայտնաբերվում են հուլունքաշարերում, կամ առանձին (աղ. 50, 12, 13, 14): Մ.թ.ա. VI-IVդդ. զարդերի մեջ հանդիպում են սովորական սրաքարերի ձևով, սակայն շատ փոքր չափերի (2,5-4սմ) կախիկներ, որոնց ձևերի նրբագեղությունը, օգտագործման հետքերի բացակայությունը թույլ են տալիս դրանք համարելու զարդ-թալիսմաններ (աղ. 50, 15, 16):

Այս բոլոր մանր կախիկները գալիս են հնուց և քննարկվող ժամանակաշրջանի միջոցով փոխանցվում են հելենիստական և ուշ անտիկ դարաշրջանների մշակույթին:

ՇԻԳՂԵՐ: Հայաստանի մ.թ.ա. VI-IVդդ. հուշարձաններից հայտնաբերված շիգղերը (ֆիբուլա) պատկանում են երկու մասից պատրաստվող տեսակին: Շիգղերի հիմնական կիրառվող մասը՝ ուղիղ կախովի ասեղը, բոլորի մոտ միատեսակ է: Տարբերություններ կրում են միայն աղեղը և ասեղնակալը: Ամենապարզ շիգղերը ունեն բրոնզե կամ երկաթե կլոր կամ քառակող հաստ լարից պատրաստված աղեղ, որի մի ծայրը տափակեցված և վեր է ածված ասեղնակալի: Մյուս ծայրը հաստացված է կլոր կամ կոնաձև, որի շուրջը փաթաթելով ամրացված է ասեղը (չափերը՝ բարձր. 1,5-4,5սմ, երկ. 2,0-2,5սմ): Այս շիգղերի մի մասը աղեղի կենտրոնական մասում ունի ռոմբաձև հաստացում, իսկ ծայրերը զարդարված են ուռուցիկ գոտիներով (աղ. 51, 1, 3): Մեծ խումբ են կազմում աղեղի հատուկ գեղարվեստական ձևավորում ունեցող շիգղերը: Սրանց աղեղները լայնեցված, տափակեցված են, ծվածև կամ ուղղանկյունաձև և հարդարված են ռելիեֆ, փորագիր երկայնակի ակոսներով կամ կենտրոնական մասում խաչաձևվող զիգզագներից կազմված զարդագոտիով: Ուղղանկյուն ձևավորված աղեղները եզրերից ունեն լայնակի փոքրիկ ակոսներ կամ գեղեցիկ կտրտված հանվածքներ ու փորագիր, իրար հանդիպակաց եղևնաձև զարդ (աղ. 51, 2, 4, 5, 10): Հետաքրքիր են մեծ չափերի և աղեղի արտակարգ հարդարանք ունեցող երկու շիգղեր: Առաջինի վահանիկը կրում է երկու շարքով ութական ուղղանկյուն ելուստներ, իսկ երկրորդի ողջ տարածքը լցված է երեք շարք չորսական վերադիր կլոր կոճակներով: Այս շիգղերը խիստ զանգվածեղ են ու ծանր (աղ. 51, 6, 7): Պատրաստման տեխնիկայով և աղեղի ձևավորմամբ տարբերվում են Կարճաղբյուրից և Մակարաշենից հայտնաբերված շիգղերը: Դրանք միջին չափերի են, աղեղը թերթիկավոր նուրբ վահանիկ է, որի մակերեսը հարդարում են կոփածո գնդիկներով կատարված մի դեպքում համակենտրոն շրջանագծեր, մյուս դեպքում վարդյակ (աղ. 51, 8, 9):

Քննարկվող շիգղերի մեծ մասը պատրաստված է աղեղները կաղապարում ծուլելու եղանակով, որից հետո կատարվել է փորագիր զարդանախշումը և ասեղի ամրացումը, ի տարբերություն կոբանյան միակտոր շիգղերի, որոնք ծուլվում էին ամբողջական, ասեղի հետ միասին: Երկաթե օրինակները պատրաստված են կոման, կոփման տեխնիկայով, որի պրոցեսը հնարավոր է վերականգնել Դ.Բ.Շելովի պեղումներով, Տանահսում գտնված անավարտ շիգղերի դիտարկմամբ: Ընտրված մետաղե ծողի վրա, մուրճի հարվածներով, նշավակվում են ապագա շիգղի մասերը, հետո հավասարաչափ

կռում ողջ շիգը, ոչ մի մասը առանձին մինչև վերջ չավարտելով (222, էջ 72-73): Կարճաղբյուրի և Սակարշենի վերը քննարկված շիգերը պատրաստվել են բրոնզե թերթիկը կտրելով, կոփելով և դրվագելով:

Քննարկվող շիգերը իրենց առատ նախատիպերն ունեն մ.թ.ա. VIII-VIդդ. համալիրներում, իսկ որոշ դեպքերում պարզապես կրկնում են դրանց: Այս շիգերից հայտնաբերվել են Արգիշտիխինիլիի, Կարմիր բլուրի, Լալվարի ուշ խմբի դամբարանների, Սևանի ավազանի հուշարձանների թե՛ ուրարտական, թե՛ տեղական համալիրներում (156, էջ 156, նկ. 86: 179, էջ 36, նկ. 18: 255, էջ 117, նկ. 86, 87, 88: 20, նկ. 153, 154, 158):

Հայաստանում շիգերը հանդես են գալիս մ.թ.ա. IX-VIII դարում: Ամենավաղ օրինակները Նոր Արեշի ուրարտական կոլումբարիում հայտնաբերված շատ մեծ չափերի, խիստ ուռուցիկ աղեղով, թռչնի իրաններով զարդարված, լայն ասեղնակալով շիգերն են, որոնց Հ.Ա.Մարտիրոսյանը վերագրում է կոբանյան տիպին (154, էջ 242-243, աղ. XXIV, 1, 2): Կոբանյան տիպի միակտոր շիգեր Հայաստանում հանդիպում են Լալվարից, Բջնիից, Օշականից (255, էջ 116, նկ. 85: 154, էջ 276, 110, աղ. LXV), սակայն լայն տարածում չեն գտել: Ինչպես ցույց է տալիս քննությունը, Հայաստանում տարածվել և հետագայում զարգացել են Առաջավոր Ասիայում, Սիրիայում առաջացած, Կուֆտինի բնորոշմամբ, բրոնզե աղեղով, երկաթե կախովի ասեղով շիգերը, ինչպիսիք հայտնաբերվել են Ռաս-Շամրայի քարարկղերից, Գորդիոնից, Դելֆեհուլուկից, Հասանլուից և թվագրվում են մ.թ.ա. VIII-VI դարերով (136, էջ 48: 267, էջ 150, նկ. 7: 256, էջ 39): Թեև Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի հուշարձաններում ևս հանդիպում են այս շիգերից (170, աղ. XII_4: 187, նկ. 4: 125, էջ 204, աղ. I, 4), սակայն փոքր թվով և հավանաբար Հայաստանից են անցել այդտեղ: Դրանք չեն կարողացել այդ հուշարձաններից դուրս մղել միածույլ կոբանյան տեսակի շիգերը (199, էջ 162, նկ. 3-1, 7-9), որոնք գերակշռում են նաև Արևելյան Եվրոպայում և Բալկաններում (69, էջ 101: 185, էջ 332, նկ. 12): Իսկ Հայաստանում, քննարկվող տեսակը տեղայնացել և զարգացել է, ձեռք բերելով աղեղների հատուկ դեկորատիվ ձևավորում: Այս առանձնահատկությունը և ասեղի միացման մեթոդը պետք է համարել շիգերի երկարատև ավանդական գոյության արդյունք և քննարկվող շիգերը՝ տեղական արտադրանք: Այն հանգամանքը, որ դրանց ձուլման կաղապարներ դեռևս չեն հայտնաբերվել, դեռևս չի ժխտում այս կարծիքը, քանի որ հռոմեական ընդարձակ պրովինցիաներից գտնված բազմահազար շիգերի դիմաց գտնվել է միայն 4 կաղապար (230, էջ 235): Իսկ Նորաշենի շիգերը հայտնաբերվել են զարդագործի գործիքների, հալոցիկի և զարդերի միջավայրում: Եվ վերջապես, ըստ երևույթին շիգեր կրելը հայերի համար այնքան բնորոշ է եղել, որ Պերսեպոլսի Ապադանայի հարթաքանդակներում պատկերված հարկատուների մեջ միայն հայերը և կապադովկիացիներն են թիկնոցների վրա կրում են շիգեր (270, աղ. 29B, 35A, B):

Շիգերի հետագա զարգացման ընթացքում, Հայաստանում և նրա հարևան երկրներում նկատվում են տարբեր երևույթներ: Եթե այդ երկրներում հելենիստական և ուշ անտիկ ժամանակաշրջաններում կարծես գերակշռություն են ձեռք բերում հռոմեական կամ արևմտյան տեսակի արծնապատ շիգերը (Բորի, Թլի, Մցխեթա, Սանտա, Սինգեչաուր), ապա Հայաստանում այդ նույն ժամանակաշրջանում շիգերը պահպանում են իրենց տիպը, թեև սակավաթիվ են դառնում:

ՁԱՐԴԱՔՈՐՈՑ-ՀԵՐԱԿԱԼՆԵՐ: Սրանք կտրվածքում կլոր կամ քառակող բարակ ձողեր են գլխիկների ամենատարբեր ձևավորմամբ և հարդարմամբ: Դրանցից ամենապարզները, հայտնաբերված Աստղի բլուրից, Նորաշենից, Կարճաղբյուրից, պատրաստված են բրոնզե լարի ծայրը ոլորելու և պարույրաձև գլխիկ ստանալու միջոցով (երկ. 3,5-10սմ): Քորոցների այս ձևը հնուց է գալիս և շարունակվում է հելենիստական ժամանակաշրջանում (աղ. 52,1):

Այրումի գանձի երեք քորոցները կլոր ձողիկներ են, որոնք դեպի վեր հաստանալով՝ ավարտվում են տանձաձև զանգվածեղ գլխիկներով (երկ. 6-17 սմ): Պատրաստված են ձուլման եղանակով և միակտոր են (աղ. 52,2): Այս քորոցներից հայտնաբերվել են նաև Սևանի հուշարձաններից (20, նկ. 156-159): Ըստ երևույթին, այս տեսակը կարելի է սերված համարել մ.թ.ա. VII-VIդդ. թվագրվող Լալվարի, Բեշտաշենի, պրիզմայաձև, զանգվածեղ գլխիկներով քորոցներից (255, նկ. 94_7: 160, աղ. X): Այրումի մյուս երկու քորոցների ձողիկները կրում են երկու ռելիեֆ գոտու վրա նստած կիսակլոր, Բերդի յոթ քորոցները՝ ներճկված գծիկներով զարդարված տափակ, իսկ Կարճաղբյուրի քորոցի ձողիկը ռելիեֆ գոտիով առանձնացված աշտարակաձև գլխիկներ (աղ. 52, 3, 4, 5):

Հայկական զարդագործության համար նոր երևույթ են Բերդի հինգ քորոցները (երկ. 10-

16սմ), պատրաստված մեծ վարպետությամբ և հմտությամբ: Քորոցների ծողերը, վերին մասում տափակում են, ծյուղավորվում և ավարտվում մեկ կամ երկու զույգ գալարներով (աղ. 52, 6, 7): Դրանք խորհրդանշում են խոյի խիստ ոճավորված գլխիկներ, կապվելով մ.թ.ա. II-I հազարամյակների մարդկանց տիեզերական պատկերացումներում կարևոր դեր խաղացող սիրված և պաշտված կենդանու հետ, որի պատկերներով հարդարված են խեղեցեն բազմաթիվ նմուշներ, կախիկներ, Աստղի բլուրի տաճարի մանրակերտը, ապարանջանները և այլն: Նման քորոցներ հայտնի են Անդրկովկասի շատ հուշարձաններից: Սակայն զուգահեռների մեծ մասը մեզ տանում է Հյուսիսային Կովկաս (211, աղ. XXVI: 91, էջ 186, նկ. 1): Հավանական է, որ այս քորոցները լինեն հենց այդտեղից, սակայն պետք է նշել, որ խոյի պաշտամունքի հետ կապված, հակառակ կողմեր ուղղված գալարներով կախիկ-զարդեր Հայաստանում հայտնաբերվում են հնուց ի վեր (104, էջ 91), որոնք կարող էին վաղ հայկական ժամանակաշրջանում զարդարել քորոցների գլխիկները, կրելով բարդ սիմվոլիկա, կապվելով պտղաբերության պաշտամունքի հետ (141, էջ 90):

Վաղ հայկական զարդագործության մեջ հանդիպում է նաև քորոցների գլխիկները քանդակային մոտիվներով զարդարելու տեխնիկական հնարը, որը խորթ չէ ընդհանրապես այդ ժամանակաշրջանի գեղագիտական մտածելակերպին: Այսպիսի մոտիվների հմտորեն կիրառման օրինակներից է Աստղի բլուրի զարդաքորոցը, որի կլոր ծողիկը լայնանում է և ավարտվում այծերի կիսահրաններով ստեղծված հերալդիկ հորինվածքով: Զարդաքորոցը ծուլածո է (աղ. 52, 8): Ինչպես վերը նշվեց, Բերդի քորոցների առիթով, չնայած քորոցի միակը լինելուն, բացառիկ երևույթ չէ Հայաստանի մ.թ.ա. VI-IVդդ. զարդագործության մեջ: Այդպիսի հորինվածք ունեն Խրտանոցից, Սևանի ավազանից գտնված կախիկները, Արմավիրի պեկտորալը և այլն: Նման կերպարվեստային մոտիվներով զարդաքորոցներ գտնվել են նաև Վրաստանի, Ադրբեջանի, Հյուսիսային Կովկասի հուշարձաններից: Վ.Ի.Կոզենկովան, որը այս քորոցները հատուկ ուսումնասիրման է ենթարկել, դրանք բնորոշ է համարում միայն կոբանյան արվեստին (133, էջ 12-15): Սակայն վերը թվարկած հուշարձաններում Առաջավորասիական երկրներում և Իրանում հանդիպող կերպարվեստային մոտիվներով հարդարված գլխիկով քորոցների առկայությունը թույլ չի տալիս նման եզրակացություն անելու, քանի որ երկիրան կենդանիների մոտիվը շատ ունիվերսալ է և հանդիպում է ընդարձակ տարածքից (184, էջ 132): Ինչպես նշվեց Աստղի բլուրի զարդաքորոցը թե՛ իր սիմվոլիկայով, թե՛ պատրաստման տեխնիկական և գեղարվեստական հնարով դուրս չի գալիս վաղ հայկական զարդագործության սահմաններից, մանավանդ որ զարդաքորոցների զարգացումը Հայկական լեռնաշխարհում ունի երկար դարերի անընդմեջ պատմություն և ավանդներ, որոնք շարունակվում են հելենիստական ժամանակաշրջանում ևս, ինչպես Լիճքի խոյի գլխով ոսկրե քորոցը,Գառնիի, Կարճաղբյուրի հելենիստական ժամանակաշրջանի խիստ ոճավորված գլխիկներով քորոցները (33, էջ 279, նկ. 5: 215, էջ 43):

Զարդաքորոցները կիրառվել են բարձր սանրվածքների ամրացման համար, ինչպիսիք ունեն Այրումի գանձի կանանց արձանիկները, հագուստների, թիկնոցների վրա, ինչպես վկայում է Լալայանը, որը դամբարաններում դրանք գտել է հանգուցյալների կրծքերին (20, էջ 160, 176, 178):

ԿՈՃԱԿՆԵՐ: Վաղ հայկական ժամանակաշրջանում ամենաբնորոշ և տարածված կոճակները կիսագնդաձև, ուռուցիկ արտաքինով են, որոնք զգեստին կարվել են հակառակ կողմում ամրացված պնդօղակի միջոցով: Այս կոճակները փոքր են, չափերը տատանվում են 1,5-3,7սմ-ի միջև, պատրաստված են բրոնզից, բացառությամբ Աթարբեկյանի մի քանի արծաթե կոճակների (աղ. 53, 5): Դրանց կիրառությունը գալիս է նախորդ դարերից, առատորեն հանդիպում Լալվարի, Խրտանոցի, Սևանի ավազանի նյութերի մեջ: Կոճակների այս տեսակը տարածված է նաև Անդրկովկասի նույն դարերով թվագրվող հուշարձաններում և օգտագործվել է ոչ միայն առօրյա զգեստի, այլև զրահաշապիկի որոշ մասերի վրա, ինչպես երևում է Լոռիի, Գոլովինոյի դամբարանների պեղումներից հայտնաբերված նյութերից (97, էջ 185, նկ. 13,):

Կոճակների այլ տեսակ են ներկայացնում Բերդի և Նորաշենի երկու մեծ կոճակները (տրամ. 3սմ): Արանք կոնաձև, սրածայր են, որոնց պնդօղակը ամրացված է հակառակ կողմի խորը փոսիկում (աղ. 53, 1):

Եզակի է Նորաշենից գտնված տափակ ձվաձև մակերեսով կոճակը, որի հետնամասում ամրացված է բավական մեծ չափերի պնդօղակը (կոճակի երկ. 3,5սմ, լայնքը՝ 1,5սմ) (աղ. 53, 6): Հավանաբար այս դարերում օգտագործվել են նաև խեցեղեն կոճակներ, քանի որ Թմբադի-

րի պեղումներից գտնվել են այդպիսի կոճակների նախապատրաստուկներ:

ՈՒՆԵԼԻ-ՄԱՍԽԻԼՆԵՐ: Հարդարանքի առարկաներից են փոքր չափերի ունելիները, որոնք, բացի Նորաշենի երկու նմուշներից, հայտնաբերվել են միայն դամբարաններից՝ Բերդ, Աստղի բլուր, Խրտանոց, Որնակ:

Դրանք պատրաստված են բրոնզե կամ երկաթյա թիթեղներից (չափերը տատանվում են 6,5-8սմ-ի միջև) թերթիկը երկու հավասար մասի ծալելու միջոցով: Ծայրերը ծեծված, լայնացած են ու սրված (աղ. 53,3): Կառուցվածքի տեսակետից մի փոքր տարբերվում է Բերդի մասխիլը, որի գեղեցիկ ձևավորված կանթը առանձին է պատրաստված ու զոդված իրանին, ունի կախելու անցք: Ամբողջ ունելին նույնպես զարդարված է փորագիր նախշերով (աղ. 53, 4):

Ունելի-մասխիլները, որպես հարադրանքի առարկաներ, հայտնի են նաև նախորդ մ.թ.ա. VII-VIդդ. համալիրներից՝ Լալվար, Դիլիջան:

ՃԱՐՄԱՆԴՔՈՐՈՑՆԵՐ: Վաղ հայկական բնակավայրերից և դամբարաններից գտնվել են քարե ճարմանդներ, որոնք շիգղերի և մեծ չափերի կոճակների նման ծառայում էին հագուստների, թիկնոցների, կոճկման, ամրացման համար: Դրանց պատրաստման համար նյութ են ծառայել ավազա-կրաքարերի և բազմագույն հասպիսի տեսակները: Ճարմանդներն ունեն փռված հատած կոնի ձև, որի կենտրոնական անցքի մեջ ագուցվում էր մետաղե քորոցը (աղ. 53, 8): Հասպիսե տեսակները լավ փայլեցված են, երբեմն համակենտրոն շրջանակներով զարդարված, իսկ կրաքարային տեսակները սպիտակ գույնի են, անփայլ, հարդարված են կետի շուրջը, երկու համակենտրոն շրջանագծերից կազմված «աչքի» պատկերով: Երեքական կամ չորսական աչքերը դասավորված են հավասար հեռավորությամբ, հաճախ առնված են ուղիղ կամ ալիքավոր փորագիր գծերի միջև (աղ. 53, 2, 7, 9): Այս զարդանախշը սիրված մոտիվ է ոսկրե, կրաքարե առարկաները հարդարելու տեխնիկայում: «Աչքով» զարդարված ճարմանդ քորոցները լայնորեն տարածված էին նաև հելենիստական և ուշ անտիկ ժամանակաշրջանում:

ՀՈՒԼՈՒՆՔՆԵՐ: Ա.թ.ա. VI-IVդդ. բնակավայրերից և դամբարաններից հայտնաբերված հուլունքները, ըստ պատրաստման նյութի, երեք մեծ խումբ են կազմում՝ 1. բնական նյութեր, 2. մետաղներ, 3. արհեստական նյութեր:

Բնական նյութերից հանդիպում են քարը, խխունջները, ատամները, ոսկրը և այլն: Մետաղներից օգտագործված են արծաթը, բրոնզը, ծարիրը, իսկ արհեստական նյութերից՝ կավը, ապակե մածուկը, ապակին, կավը:

Քարե հուլունքների պատրաստման համար օգտագործվում են ագաթը, սարդիոնը, կվարցը, հասպիսը և այլն: Հատկապես բազմազան են սարդիոնե հուլունքների տեսակները: Վաղ հայկական ժամանակաշրջանում պահպանվում են նախորդ դարերի համար բնորոշ սարդիոնե հուլունքների բոլոր տեսակները (180, էջ 48-49: 151, էջ 84-86: 143, էջ 160-161): Վարդագույնը՝ երկաթի օքսիդի միկրոսկոպիկ կետերի պարունակությամբ, կարմրավունը՝ գորշավուն միջնաջիղերով և ճեղքվածքներով, անթափանց մուգ կարմրաշագանակագույնը: Սարդիոնե հուլունքների մեջ գերակշռում է գնդաձև տեսակը, առատ են նաև գլանաձև, տափակ սկավառակաձև, տափակ- նիստավոր, կտրտված անվակաձև, եռանիստ տեսակները: Բոլորը պատրաստված են մեծ վարպետությամբ: Անցքի ուղին բացելու համար օգտագործված են բույթը, շտիֆտը, փողրակը: (Աղ. 55, 1-15): Սարդիոնե հուլունքների բոլոր տեսակներն իրենց վաղ նախատիպերն ու զուգահեռներն ունեն Անդրկովկասի, Փոքր Ասիայի, Իրանի և այլ հուշարձանների համալիրներում և թվագրվում են մ.թ.ա. XII-Iդդ. և ավելի ուշ: Առատ են նաև ագաթե հուլունքները, որոնց մեջ նախապատվությունը տրված է գլանաձև և տակառաձև տեսակներին: Դրանք հանիպում են մեծ և փոքր չափսերով, սպիտակ, կաթնագույն, գորշավուն երանգի ջղերի համադրությամբ և աչքի են ընկնում արտաքին մանրակրկիտ մշակվածությամբ, ձևերի կանոնավորությամբ, փայլեցմամբ: Անցքերը արված են բույթով, խիստ նրբությամբ (աղ. 55, 16-19): Ագաթե հուլունքները ևս իրենց ձևերով քննարկվող ժամանակաշրջանին են անցնում նախորդ դարաշրջանից: Հայաստանում այդ հուլունքները վկայված են բրոնզե դարաշրջանից, առատորեն հանդիպում են ուրարտական համալիրներում: Ձևի և մշակման տեսակետից դրանք շատ նման են ասորեստանյան նման հուլունքներին և գրականության մեջ այն կարծիքը կա, որ ներմուծված են: Սակայն Հ.Ա.Մարտիրոսյանը գտնում է, որ դրանց մի մասը կարող է լինել տեղական (151, էջ 86): Եվ այս կարծիքի օգտին է խոսում Հայկական բարձրավանդակում ագաթե և սարդիոնե հուլունքների առատությունը: Միայն այժմյան Հայաստանում տասը հանքավայրերի առկայությունը, մի քանիսը արդյունաբերական նշանակությամբ, կարող էին պայմանավորել այդ հուլունքների առատությունն ու բազմազանությու-

նը մեր հնավայրերում: Հատկապես արժեքավոր են Մեծամորի պեղումների ժամանակ հայտնաբերված հասպիսի արտադրական բեկորները, որոնք հաստատում են ագաթե և սերդոլիկե հուլունքների տեղական արտադրության առկայությունը (24, էջ 73): Արտակարգ հետաքրքիր նմուշ է օձաքարից պատրաստած, ճանճաձև հուլունքը, գտնված Կարճաղբյուրի մ.թ.ա. VI-IV դդ. դամբարանում, որն իր միակ նմանակներն ունի Ուջանի (14բ, էջ 141, աղ. I₈) դամբանաթմբի նյութերի մեջ: (աղ. 55, 20):

ՍԱԹ: Բնական նյութերից պատրաստված հուլունքների հաջորդ խումբը կազմում են ոսկրե հուլունքները: Դրանք հիմնականում հուլունք բաժանարարներ են, որոնք ունեն մեծ և փոքր չափեր: Մեծերը բլիթաձև և ձվաձիր են, կենտրոնական մեծ տրամագծով անցնող, թելերից կախելու, փոքր անցքերով: Փայլեցված են և տրամագծով կողերին շեղ շարված փոսիկներով: Ոսկորե հուլունքների մեծ խումբը վերաբերում են գրականության մեջ հայտնի «դոմինոյաձև» տեսակին: Դրանց ձևը միօրինակ է. տափակ պրիզմաներ են, եզրերին մեկ կամ երկուական փորվածքներով, իսկ լայն կողերին կա «աչքի» փորագիր պատկեր: (Աղ. 55_{25-29}): Այս հուլունքները հայտնի են Սևանի ավազանի հուշարձաններից (24, էջ 74, տախտ. 5, գ. 1; 154, էջ 210): Հետաքրքիր է, որ Սևանի ավազանից դուրս գտնվող հուշարձաններից հայտնաբերված այս տեսակը պատրաստված է սպիտակ կրաքարային (тальк) նյութից՝ Ռեդկին լագեր, Խրտանոց, Թեյշեբաինի (151, էջ 85; 154, էջ 64-66), Լենինական, Թրիալեթի (136, էջ 57-59): «Դոմինոյաձև» հուլունքները Կուֆտինը բնորոշ է համարում միայն Թրիալեթիի մշակույթի համար: Խրտանոցի և համաժամանակյա դամբարանների նյութական մշակույթի քննության ժամանակ Հ.Ա.Մարտիրոսյանը իրավացիորեն այս տեսակը բնորոշ համարելով նաև Հայաստանի համար, ընդարձակեց դրանց տարածման շրջանակը, և գոյատևման վերին սահմանը հասցրեց մ.թ.ա. VIIIդ.: Թ.Ա.Խաչատրյանի ուսումնասիրությունները Արթիկում և Շիրակի մյուս հուշարձաններում, ընդլայնեցին այդ հուլունքների տարածման թե՛ աշխարհագրական, թե՛ ժամանակագրական ստորին սահմանները, քանի որ այդ հուշարձաններում դրանք թվագրվում են արդեն մ.թ.ա. X-IXդդ. (218, էջ 242, նկ. 55):

Այժմ նոր ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս մ.թ.ա. VI-IVդդ. հուշարձաններում «դոմինոյաձև» հուլունքների առկայության հիման վրա, դրանց գոյատևման վերին սահմանը հասցնելու մինչև մ.թ.ա. IVդ.: Այսպիսով, «դոմինոյաձև» հուլունքների գոյատևման սահմանները դառնում են մ.թ.ա. X-IVդդ.: Բացի հուլունքաշարում հիմնական կիրառական (շարերն իրարից հեռու պահելու) նշանակությունից, այս հուլունքները կրողին պահպանել են չար աչքից, թշնամանքից, հիվանդություններից:

Քննարկվող զարդեղենի մեջ շարունակում են հանդիպել խխունջե զարդերը: Վաղ հայկական զարդերի մեջ հանդիպող խխունջների՝ կաուրի, տարբո, մարգարտախեցի, ավազի կոնաձև մեծ խխունջի պատյան (աղ. 54, 6, 7, 8, 9, 10), մեջ իրենց առատությամբ աչքի են ընկնում կաորիները: Դրանք հանդիպում են հուլունքաշարերի մեջ, առանձին կարված զգեստին կամ էլ առանձին մեկ կամ երկու հատ մետաղե օղի վրա ագուցված: Այս հմայիլների օգտագործումը վկայված է ուշ բրոնզի, վաղ երկաթի ժամանակաշրջաններից: Հայտնաբերվել են Արթիկի դամբարաններից, Դվինից (217, էջ 243: 141, էջ 23): Երկաթի լայն յուրացման դարաշրջանի հուշարձաններում խխունջների հայտնաբերումները շատանում են և շարունակվում մինչև ուշ միջնադար: Առաջավոր Ասիայում հնագույն ժամանակներից ի վեր խխունջ-հմայիլներին տրվում էր մոգական նշանակություն, դրանց վերագրելով բուժիչ կամ պահպանիչ զորության հատկանիշներ (229, էջ 21): Հատկապես մեծ են եղել կաորիներին տրվող հատկանիշները, որոնց շուրթերի ատամնավորությունը ընկալվում էր բերրիության խորհրդանիշ և տարբեր երկրներում օգտագործվել են որպես ապոտրոպայիկ հմայիլներ (80, էջ 12): Հետաքրքիր է, որ Դվինի կաուրիները գտնվել են տաճարամերձ զարդագործական արհեստանոցում, մի մասն արդեն հարմարեցված կրելու համար, իսկ մյուս մասը՝ հումքի վիճակում: Հնագույն ժամանակներից այդ խխունջ-հմայիլները օգտագործվում էին աստվածների քանդակների վրա որպես ներդիր խորհրդանիշներ, դրվում էին որպես ավանդ տաճարների հիմքերում (141, էջ 93) և որպես պահպանակներ հանգուցյալների հետ, ինչպես հանդիպում են Խրտանոցի և մ.թ.ա. VI-IVդդ. դամբարաններում: Այս խխունջ-հմայիլները Հայաստան և հարևան երկրներ էին հասնում Միջերկրածովյան, Հնդկական օվկիանոսի ափերից, լույս սփռելով նաև այդ շրջանների և Հայաստանի միջև եղած առևտրական կապերի վրա: Հետաքրքիր է Կարճաղբյուրի 1977թ. պեղած մ.թ.ա. VI-IVդդ. դամբարաններից հայտնաբերված «տարբո» կոչված խեցին (աղ. 54, 6): Այն

քառանկյուն ուրվագծով տափակ թերթիկ է, որի մի երեսին լավ երևում են հողմածև գալարները, իսկ կենտրոնում՝ իննածև անցքը, որի հետ էլ կապված է դրա հավատալիքային դերը:

Մ.թ.ա. VI-IV դդ. դամբարաններից հայտնաբերվել են նաև այլ տիպի հմայիլներ, կենդանիների ատամներ, ճաներ, մատնաոսկոր-ֆալանգա (աղ. 54, 12), որոնց պատրաստման համար քիչ գործ էր պահանջվում. մի փոքր փայլեցում և կախելու անցքի բացում:

Այս բոլոր հմայիլները ևս օգտագործվել են որպես պահպանակներ չար ուժերի, չար աչքերի դեմ և գուշակության առարկաներ:

ՍԵՏԱՂԵ ՀՈՒԼՈՒՆՔՆԵՐ: Մ.թ.ա. VI-IVդդ. մետաղե հուլունքների հիմնական նյութը բրոնզն է: Բրոնզից են պատրաստված ոչ միայն հուլունքները, այլև զարդերի հետ հայտնաբերվող շղթաները, խողովակները (աղ. 54, 11), բաժանարարների մի մասը: Հուլունքների մեծ մասը պատրաստված է կարճ կամ երկար խողովակի ձև, ստացված բրոնզե թերթիկը ոլորելու և ծայրերը զոդելու միջոցով: Համարյա բոլոր նմուշների վրա պարզորոշ երևում է միացման կարը: Բրոնզե հուլունքների մյուս խումբը գնդաձև է, պատրաստված նուրբ թերթիկի երկու կիսաթասիկների միացման միջոցով: Այս տեսակը լայն տարածում է գտնում հելենիստական ժամանակաշրջանում Ակավ են հանդիպում տակառաձև և երկկոնաձև մետաղյա հուլունքները: Շարունակվում է նախորդ դարերից եկող մետաղյա բաժանարարների պատրաստումը: (Աղ. 55, 30-36):

Մ.թ.ա. VI-IV դդ. հուլունքների մեջ պահպանվել են ծարիրից պատարստված ոսպաձև հուլունքները (Աթարբեկյան, Զրառատ, Կարճաղբյուր), որոնք խիստ վերապրուկային են, թե՛ ձևի, թե՛ նյութի տեսակետից: Դրանք բնորոշ են վաղ համալիրներին և մ.թ.ա. VI-IV դդ. նմուշներով դադարում են գոյություն ունենալուց: (Աղ. 55 $_{34}$):

Քննարկվող հուլունքների հաջորդ մեծ խումբը կազմում են ապակե մածուկից (ֆայանս) և ապակուց պատրաստված հուլունքները:

Ապակյա մածուկե հուլունքները և կախիկները կիրառվում են հուլունքաշարերում մյուս տեսակների հետ խառը, թեև հանդիպում են նաև ինքնուրույն շարեր: Տարածված են մածուկե, պարզ երկրաչափական ձևերով հուլունքները: Ձևավոր առարկաները, սյուժետային պատկերներով կախիկները բացակայում են, ի տարբերություն նախորդ՝ հատկապես ուրարտական հուլունքաշարերի: Մածուկե հուլունքաշարերում հանդիպում են ինքնաջնարակվող և կիսաապակյա շաղախե տեսակները (258, էջ 436-437): Այս հուլունքները որակով ևս միատեսակ չեն և հիմքի ու ծածկույթի բնույթով կազմում են մի քանի խումբ՝ ա) փխրուն, մանրահատիկ, որի միջուկը սպիտակ է, իսկ վերին ծածկույթը այնքան հարթ ու նուրբ, որ թույլ է տալիս դրանց վերագրելու ինքնաջնարակվող տեսակին, բ) ամուր, խիտ, մանրահատ միջուկով, արտաքին ծածկույթը և միջուկը միևնույն գույնով, կիսապակյա շաղախից պատրաստված, գ) ամբողջությամբ ապակու նման, միջուկը բոլորովին չառանձնացող: Սրանք հավանաբար ունեցել են դյուրահալ բաղադրություն և թրծման բարձր ջերմաստիճանը նպաստել է լրիվ ապակեցմանը (67, էջ 24) և դ) կոպիտ ծակոտկեն, սպիտակ հիմքով, վերևից ծածկված ջնարակի ոչ հարթ շերտով, որը ծծվում է միայն վերին շերտեր և ժամանակի ընթացքում թափվում:

Գունային գամմայի տեսակետից հաճախադեպ են փիրուզագույն, մուգ կապույտ, դեղնականաչ, սպիտակ, գորշ կարմիր, մուգ կանաչ երանգներով հուլունքները: Դրանց գերակշռող մասը տարբեր չափերի, անկայուն համաչափություններով, կլորավուն հուլունքներ են, պատրաստված ա) թեթև ջնարակով պատած սպիտակ կամ դեղին, բ) գորշակարմիր ջնարակով պատած թրծակավային, գ) փիրուզագույն շաղախներից: Հաջորդ, շատ հանդիպող տեսակը, սպիտակ փխրուն հիմքով, վառ փիրուզագույն ծածկույթով պատած, կարճ և երկարավուն տակառաձև հուլունքներն են, որոնց մի մասը զարդարված է երկայնակի փոսիկներով: Առատ են նաև կարճ և երկար, փիրուզագույն, դեղին, կարմիր, գլանաձև հուլունքները: Դրանցից մեծերը հարդարված են ցանցաձև նախշով, երկայնակի կամ լայնակի փորագիր գծիկերով, առվակոսներով, հաստատուն զարդաձևեր, որոնք հանդիպում են մ.թ.ա. IX-VII դարերից: Ամրված տեսակներից են նաև երկկոնաձև, տատանվող համաչափություններ ունեցող հուլունքները: Սրանցից մեծ չափեր ունեցողները (5-8 մմ) սուր եզրակողի վրա ունեն փորվածքներ, հանվածքներ:

Կլորավուն կողերով, բլթակավոր հուլունքները պատարստված են կիսապակյա շաղախից և պատած երկնագույն ջնարակով: Բլթակները, որոնց թիվը հասնում է մինչև տասի, սկսվում են անցքից հեռու: (Աղ. 55, 37-44, 47-52):

Ապակյա մածուկե հուլունքների վերջին խումբը կազմում են պտղաձև կամ կաթիլաձև կախիկները, վերին մասում կախելու անցքով:

Պատրաստված են երկնագույն ջնարակով պատած խիտ զանգվածից, հարդարված խաչաձև և ցանցկեն փորագիր զարդամոտիվներով: (Աղ. 55, 45, 46): Սրանք կրկնում են նախորդ դարերի տեղական և ուրարտական հուշարձաններից հայտնի նմանօրինակ կախիկները (180, էջ 51, աղ. IV_{18}: 151, աղ. VI_2. VIII_9):

Ապակյա հուլունքները ներկայացված են անգույն թափանցիկ և գունավոր տեսակներով: Առաջինները շարունակում են մ.թ.ա. VII-VI դդ. համալիրներում հանդիպող հուլունքների ձևերը և հարդարման տարրերը: Դրանք գնդաձև են, տափակ գնդաձև, երբեմն էլ երկկոնաձև: Բոլորն իրենց մեջ ունեն պղպջակներ՝ որը վաղ ապակյա հուլունքների հիմնական հատկանիշն է: Պատրաստված են ձուլման եղանակով, որի հետքերը երևում են անցքի եզրերին: Նույնատիպ թափանցիկ ապակուց են պատրաստված նաև տարբեր չափերի կլոր, բլթակավոր հուլունքները, որոնք ունեն հինգից մինչև տաս կլորավուն եզրերով բլթակներ: Ոչ մեծ քանակությամբ հանդիպում են նաև թեթև կանաչավուն երանգի թափանցիկ կախիկներ: Ավելի շատ են կիսաթափանց և անթափանց գունավոր ապակուց պատրաստված հուլունքները, որոնք ունեն թե՛ ձևերի, թե՛ երանգավորման մեծ բազմազանություն: Մեծ թիվ են կազմում սև, սպիտակ, երկնագույն, մուգ կապույտ, վառ դեղին, տարբեր չափերի՝ կլոր, անկանոն կլոր հուլունքները, պատրաստված ապակե լարը մետաղե ծողիկի վրա փաթաթելու, հետո երկար շղթան կտրտելու եղանակով (67, էջ 50):

Շատ են նաև նույն գույների, ապակե երկկոնաձև, գլանաձև մանր և միջին չափերի հուլունքները, որոնց մեջ աչքի են ընկնում մուգ կապույտ, լազուրիտին ընդհանրինակված տեսակները: Ոսկեգույն դեղին ապակուց պատրաստված Կարճաղբյուրի երկկոնաձև հուլունքները պատած են սպիտակավուն փառով (patina), որը ապակու մեջ կալցիումի և մագնեզիումի օքսիդների պարունակության արդյունք է: Առանձին խումբ են կազմում նույն ապակուց պատրաստված բզեզաձև (սկարաբեյաձև) հուլունքները, որոնք կրկնում են այդ նույն ժամանակաշրջանում օգտագործվող գեմմաների՝ փորագիր քարե կնիքների ձևերը (Զրառատ): Նույն՝ երկնագույն, դեղին, կանաչ, կապույտ անթափանց ապակիներից են պատրաստված (մինչև 2,1 սմ երկարությամբ), խիստ սրածայր, վերևում կախելու օղակով կախիկները: (Աղ. 55, 53-54, 63):

Հանդիպում են քննարկվող գնդաձև, երկկոնաձև,. պտղաձև հուլունքների բազմագույն տեսակներ ևս: Դրանց զարդանախշը հիմնականում բաժանվում է երկու խմբի՝ *շերտավոր և աչքավոր*:

Շերտավոր զարդերով հուլունքները պատրաստված են անթափանց և թափանցիկ միագույն հիմքի վրա, վերևից այլ գույնի ապակե լարերի գլանման տեխնիկայով: Գույները կիրառված են տարբեր համադրություններով՝ կապույտ-սպիտակ, կապույտ-դեղին, դեղին-սպիտակ և այլն: Գնդաձև տեսակները զարդարված են, մեծ մասամբ, մեկ կամ երկու պտույտ փաթաթած ուղիղ կամ զիգզագ լարերով: Գլանաձև հուլունքները հարդարված են լայնակի դրված բազմաթիվ շերտերով: Գեղեցիկ են Զրառատի հուլունքաշարերում հանդիպող կիսաթափանցիկ մուգ-կապույտ, գլանաձև և խորանարդաձև հուլունքները, զարդարված լայնակի փաթաթած սպիտակ ալիքավոր լարերով: Կախիկների վրա զարդարող լարերը դրված են մի քանի շարքով ստորին մասում: Շերտավոր հուլունքները Հայաստանում հանդես են գալիս մ.թ.ա. VIII-VI դարերից, ակնառու նմուշներ ունենալով Կարմիր բլուրի հուլունքաշարերում: (Աղ. 55, 59-62, 68):

Գունավոր հուլունքների երկրորդ՝ աչքավոր խումբը ներկայացված է Զրառատի, Աթարբեկյանի, Դոլայի հանդի օրինակներով: Հանդիպում են պտավոր և աչքավոր տեսակները: Պտավորները հատ ու կենտ են, դրանց սպիտակ կլորավուն իրանի վրա ընդլայնական գոտիով դասավորված են երեք մեծ կապույտ պուտիկներ: «Աչքավոր» հուլունքները բավական միատիպ են և ունեն աչքերի պարզ դասավորություն, վերաբերում են շերտավոր օղակաձև տեսակին (67, էջ 51), երկու սկավառակի շերտավորմամբ: Համադրվում են սպիտակ, կապույտ, կարմիր ապակին: Հուլունքները միջին չափերի են, մեծ անցքերով, որը ցույց է տալիս, որ պատրաստված են խեցե ծողի վրա ապակե լայն լարը փաթաթելու եղանակով: Զրառատի հուլունքների մուգ կապույտ հիմքի վրա մի դեպքում ամրացված են երկնագույն վահանիկ, կարմիր օղակով, իսկ մյուս դեպքում՝ սպիտակ վահանիկ մուգ կարմիր օղակով, Աթարբեկյանի հուլունքների վառ դեղին հիմքի վրա՝ կապույտ վահանիկ սպիտակ աչքով: (Աղ. 55, 64-66):

Հայաստանում աչքավոր հուլունքներ հայտնի են ուրարտական հուլունքաշարերից, պտավոր, ուռուցիկ և «աչքավոր» տարբերակներով: Դրանք հայտնաբերվել են Կարմիր բլուրից և իրենց մ.թ.ա. VI դ. թվագրմամբ, կարծես համընկնում էին այն կարծիքի հետ, որ «աչքավոր»

հուլունքների վաղ օրինակները վերաբերում են այդ դարին (242, էջ 6, 17): Պետք է նշել, որ Հայաստանի «աչքավոր» հուլունքները գունային, հորինվածքային տվյալներով և չափերով տարբերվում են Այզենի և Ալեքսեևայի կողմից քննարկված, մ.թ.ա. VI-IVդդ. թվագրվող եգիպտական և միջերկրածովյան երկրներից գտնված «աչքավոր» հուլունքներից: Ուրեմն հայկական այս հուլունքների արտադրության կենտրոնը պետք է փնտրել այլ վայրում: Թերևս՝ Միջագետքում, որտեղ արդեն III հազարամյակում պատրաստվում էր բարձրորակ ապակի: Թել-Օմարում (Սելևկիա Տիգրիսի վրա) հայտնաբերվել է ապակու պատրաստման պրոցեսին նվիրված առաջին տեքստը, որը թվագրվում է մ.թ.ա. XVII դարով (244, էջ 130 և հաջորդ): Միջագետքյան շատ հնավայրերից՝ Հասանլուից, Մարլիկից, Բաբելոնից, Պերսեպոլսից (239, էջ 121; 257, էջ 20,21; 285, աղ. 4) գտնված աչքավոր հուլունքների մեջ առկա են սպիտակ և կարմիր աչքերով օրինակները, որոնց համահունչ են հայկականները: Հայկական հուլունքների միջագետքյան ծագման ենթադրության օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ միջերկրածովյան և հյուսիսսևծովյան հուշարձաններին ապակե և մածուկե հուլունքներ մատակարարող Նավկրատիսի արտադրությունը մ.թ.ա. VIդ. վերջին քառորդին ընդհատվում է և կրկին վերսկսվում միայն մ.թ.ա. III դարից: Իսկ հայկական հուլունքաշարերում այդպիսի ընդհատում չի նկատվում: Այդ հուլունքները հայտնաբերվում են ինչպես մ.թ.ա. VIII-VIդդ., VI-IVդդ., այնպես էլ հելենիստական հուշարձաններից: Ըստ որում, դրանց տոկոսային հարաբերությունը, նույնիսկ մ.թ.ա. VI-Vդդ. և V-IVդդ. թվագրվող հուշարձաններում տարբեր են, օրինակ Ջրառատի հուլունքաշարերում ապակե հուլունքները գերակշռում են:

Ապակե հուլունքների վերջին խումբը կազմում են մետաղե ներդիրավորները: Անգույն, թափանցիկ ապակե հիմքի վրա ոսկյա կամ արծաթե թերթիկներով և հետո շատ նուրբ (1 մմ) ապակու երկրորդ շերտով ծածկելու տեխնիկայով պատրաստված հուլունքները ևս բավարար քանակությամբ են հայտնաբերվում: (Աղ. 55, 67):

Դրանք նոր երևույթ են և ոչ միայն հայ մշակույթի համար: Տարբեր չափերի այս հուլունքները հիմնականում գնդաձև են: Մետաղե ներդիրավոր հուլունքներ հայտնաբերվել են Վրաստանում, Հյուսիսային Կովկասում, Հյուսիսային մերձսևծովյան, Միջերկրածովյան քաղաքներում, Եգիպտոսում: Եվ գիտական շրջաններում այն կարծիքն է հաստատված, որ մետաղե ներդիրավոր հուլունքների արտադրությունը հիմնադրվել է Ալեքսանդրիայում մ.թ.ա. IIIդդ.: Նույնիսկ ոսկե և արծաթե ներդիրավոր հուլունքների առկայությունը համալիրներում դիտվում է որպես ստույգ թվագրող փաստ: Սակայն մ.թ.ա. V-IVդդ. թվագրվող հայկական դամբարաններում դրանց առկայությունը թույլ չի տալիս անվերապահորեն ընդունելու այդ հուլունքների այդպիսի կտրուկ թվագրումը և վայրը: Կարելի է ընդունել, որ Ալեքսանդրիայում դրանց արտադրությունը սկսվում է մ.թ.ա. III դարից և այդտեղից ավանդորեն ներմուծվում Հռոդոսյան և սևծովյան մյուս քաղաքներ: Սակայն հայկական հուլունքների արտադրավայրը գուցե պետք է կրկին փնտրել միջագետքյան կենտրոններում, թերևս Բաբելոնում, որտեղ ներդիրավոր հուլունքների պատրաստման համար ամենաանհրաժեշտ բաղադրամասը՝ թափանցիկ անգույն ապակին, արտադրվում էր մ.թ.ա. 600 թվականից (271, էջ 91-93):

Ի տարբերություն նախորդ դարերի համալիրներից հայտնաբերված հուլունքաշարերի կազմության, որտեղ գերակշռում են առավելապես քարե տեսակները, վաղ հայկականների մեջ կարծես ստեղծվում է հավասարակշռություն քարե և մյուս տեսակի՝ ֆայանսե մածուկե և ապակե հուլունքների հարաբերության մեջ:

Քննությունից՝ կարելի է եզրակացնել, որ մ.թ.ա. VI-IVդդ. հուշարձաններից հայտնաբերված հուլունքների մի մասը, ավանդաբար կարող էր ներմուծվել հարավից, գուցե Բաբելոնից և թերևս այն նույն առևտրական ուղիով, որ ձգվում էր Եփրատով: Գետով Բաբելոն գինի արտահանող առևտրականները հետ դարձին այլ ապրանքների թվում կարող էին բերել նաև հուլունքներ:

ԿՆԻՔՆԵՐ: Ա.թ.ա. VI-IVդդ. կնիքագործությունը ներկայանում է փորագիր քարեր՝ գեմմաներով և կնիքների.կավե դրոշմներով:

Կնիքների պատրաստման համար օգտագործվող նյութերի առանձնահատկություններն ու գեղարվեստական հնարավորությունները ճանաչելու, կնիքի հակառակ հորինվածքի մեջ իրական դրոշմը գուշակելու ունակությունները Հայկական լեռնաշխարհում կուտակվել էին հնուց ի վեր, կատարելագործվել ուրարտական ժամանակաշրջանում և փոխանցվել մ.թ.ա. VI-IV դարերին: Խոսքը վերաբերում է հատկապես կլոր կամ ձվաձև փորագիր քարերին՝ սրբաբզեզի ձև ունեցող կնիքներին (սկարաբեյ), որոնք լայն տարածում էին գտել Առաջավոր Ասիա-

յում: Ուրարտական ժամանակաշրջանում դրանք կիրառվում էին կոնաձև, գլանաձև, կշռաքարի և հատած բուրգի ձև ունեցող կախիկավոր կնիքների հետ, իհարկե իրենց վրա կրելով ուրարտական գաղափարախոսության խորհրդանիշներ: Մ.թ.ա. VI-IVդդ. մշակույթը ժառանգեց «սրբաբզեզ» կնիքների ձևը, պատկերման ոճը, թեմատիկան՝ եղջերուներ, այծեր, ֆանտաստիկ կենդանիներ, որսի տեսարաններ: Սակայն տեղի ունեցավ հրաժարում ուրարտական կնիքների վրա հանդիպող առատ մանրամասներից, խորհրդանիշներից, պատկերվող կերպարները դրվեցին հորինվածքի կենտրոնում, դրանց դարձվեց մեծ ուշադրություն: Պատկերվող կենդանիները դուրս բերվեցին անշարժ, կանոնիկ դիրքերից և ներկայացան ազատ, շարժուն վիճակներում: Այս ամենը խոսում է Հայաստանում կնիքների տեղական արտադրության գոյության մասին (153, էջ 143): Տեղական արտադրության արգասիք են Աթարբեկյանից և Աղվեսաձորից (Թաքիա) գտնվածները: Դրանք ձվածիր քարեր են, կախելու երկայնակի անցքերով (չափերը՝ երկ. 1,3-1,4 սմ, լայն. 0,9-1,0 սմ. հաստ. 0,31 սմ): Առաջինի հարթ մակերեսի վրա փորագրված են դեմքով իրար շրջված, վազող եղջերուներ (աղ. 54, 2), իսկ երկրորդի ողջ մակերեսը զբաղեցնում է դեպի աջ սլացող ֆանտաստիկ կենդանի, (աղ. 54, 2): Երկու կնիքների պատկերների մանրամասները պատկերված են Հայաստանի տարածքից հայտնաբերված բրոնզե ոգտիների և կնիքների ոճով: Այս հանգամանքը, ինչպես և քարի երկայնակի ձվածիրությունը, որը բնորոշ է վաղ կնիքներին (232, էջ 310) թույլ են տալիս այս երկու կնիքները թվագրելու մ.թ.ա. V դարով:

Հաջորդ, Վարդաքարից գտնված փորագիր քարը իրավամբ վերաբերում է հունա-պարսկական ոճի քարերին (4, էջ 32): Քարի վրա պատկերված է թագակիր անձնավորության մենամարտը առյուծի հետ: Առյուծը հետին թաթերի վրա բարձրացած, հարձակվում է մարդու վրա, որը աջ ձեռքով կասեցնում է հարձակումը, իսկ ձախ ձեռքի դաշույնով հարվածում գազանին: Մարդը կրում է աքեմենյան դարաշրջանի ատամնավոր թագ, երկար, առջևում ծալքավոր զգեստ: Ուսերին հասնող նրա մազերը ավարտվում են կլոր թմբիկով (աղ. 54, 3): Պատկերված թեման՝ «արքայական որսի տեսարան», արքայի հարդարանքի մանրամասները, կենդանու բաշի պատկերման ոճը, կրկնում են աքեմենյան կնիքների, նվիրատվական թերթիկների և քանդակների վրա հանդիպող սյուժեները: Կնիքը պատրաստված է «կայսերական ոճի» նորմերի համաձայն: Հաշվի առնելով նաև կնիքի սահուն ձվածևությունը, որը բնորոշ է հունա-պարսկական քարերին, և այն վերագրելով աքեմենյան արվեստին, կարելի է թվագրել մ.թ.ա. Vդ. վերջով կամ IVդ, սկզբով:

Արմավիրի պեղումներից հայտնաբերված կնքադրոշմներից (70, էջ 168) մեկը կրում է գառնուկին հոշոտող առյուծի պատկեր (աղ. 54, 5): Այս թեման ևս հաճախ է հանդիպում թե՛ ուրարտական, թե՛ առաջավորասիական կիրառական արվեստի նմուշների վրա: Գազանի մանրամասների պատկերման ոճը, շարժումը հաղորդելու պայմանականությունը ևս ի հայտ են բերում հինարևելյան արվեստի բացահայտ գծեր: Դրոշմը արված է կլոր վահանիկ ունեցող մետաղյա մատանի-կնիքով, որի ապացույցը հորինվածքը սահմանափակող պարանահյուս շրջանակի առկայությունն է դրոշմի վրա: Նկատի ունենալով վահանիկի (տրամ. 2,0սմ) կլոր ձևը, որը տարածվում է միայն մ.թ.ա. IV դարից (232, էջ 214, 225), քննարկվող կնիքը ևս պետք է թվագրել այդ դարով: Այդ դարով են թվագրված նաև Ամու Դարյայի գանձի մեջ եղած կլոր վահանիկով մատանի կնիքները (114, էջ 59, նկ. 101, էջ 62, նկ. 112): Արմավիրի հաջորդ կնքադրոշմը գտնված առաջինի հետ, պատրաստված նույն կավից, պետք է թվագրել նույն ժամանակով: Այս դրոշմը կրում է իրար վրա հարձակվող երախները բաց, լարումից ճանկերը չռած, պոչերը վեր ցցած գազանների (հովազների) պատկեր (աղ. 54, 4): Գազանների գլխիկների պատկերումը շատ մոտ է սկյութական հորինվածքներում հանդիպող իրար դեմ պայքարող գազանների (առյուծների) գլխիկներին (181, էջ 255, նկ. 88 ա, բ): Մակայն այս կնիքի վրա պատկերված գազանները դուրս են բերված սկյութականներին բնորոշ անշարժ վիճակից և մեկնաբանված են ազատ շարժման վիճակում, ինչպես մյուս կնիքների կենդանիները: Ազատ շարժման պատրանք է առաջացնում նաև կնիքի վրա շրջանագծի աղեղի բացակայությունը: Այս դրոշմը ևս, առաջինի նման, արված է կլոր վահանիկ ունեցող մատանիով (տրամ. 2,5 սմ): Առաջավոր Ասիայում դեմ հանդիման կանգնած կենդանիների մոտիվը ամենահներից է: Հանդիպում է ոճաբանական տարբեր առանձնահատկություններով և գոյատևում ու հասնում է մինչև քրիստոնեություն: Հայաստանում, որը գտնվում էր աշխարհագրական և ժամանակագրական միևնույն միջավայրում, այս մոտիվը ևս տարածված էր ուրարտական ժամանակաշրջանից:

Այսպիսով, Հայաստանում մ.թ.ա. VI-IVդդ. վերաբերող կնիքները ի հայտ են բերում հնագույն արտադրամշակութային ավանդների՝ նախորդ շրջանի արվեստում առկա հարուստ թեմատիկայի, քարի ու բրոնզի վրա փորագրման ասպարեզում կուտակված մեծ փորձի ժառանգում: Մյուս կողմից դրսևորում են կնիքների ձևերի, թեմատիկայի մեջ այն նորը, որը գալիս էր ընդհանուր ժամանակագրական և աշխարհագրական միջավայրից: Կնիքները հաստատում են Հայաստանի ավանդական կապերը փոքրասիական երկրների և Իրանի հետ, որոնք կային դեռևս հնագույն ժամանակներից (63ա, էջ 104-105):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, վերջին տասնամյակների պարբերական պեղումների, ուսումնասիրությունների և տարբեր ուղիներով կուտակված նյութերի ոճաբանական քննությունը, մանրակրկիտ համեմատությունը առաջավորասիական մյուս երկրների, Անդրկովկասի և Կովկասի, հյուսիսսևծովյան հունական քաղաքների համաժամանակյա մշակույթների հետ, թույլ են տալիս կատարելու մի շարք ընդհանրացնող եզրակացություններ Հայաստանի մ.թ.ա. VI-IVդդ. մշակույթի բնույթի, երկրի տնտեսական կյանքի, հարևան երկրների հետ ունեցած կապերի վերաբերյալ:

Այս ժամանակագրական հատվածի մշակույթը հիմնականում պահպանում է ավելի վաղ դարաշրջաններից ծագող հատկանիշներ: Մյուս կողմից մշակույթը նշանավորվում է մի շարք նոր տարրերի երևան գալով՝ հատկապես խեցեղենի, զենքի մեջ: Երկաթը, որը նախորդ ժամանակաշրջանում կատարյալ հաղթանակ էր տարել բրոնզի նկատմամբ, շարունակում էր իր հաղթարշավը, բրոնզին թողնելով զրահների, զարդեղենի պատրաստումը միայն: Երկաթե արտադրանքի նախատիպերը այլևս բրոնզե չեն: Հանդես է գալիս նոր տիպի խեցեղեն ոչ միայն ձևով, այլև որակով:

Կատարվում են շատ ձևերի միասնացում, հատկապես երկաթի իրերի, որոնք տարածվում են երկրով մեկ: Ուստի, մշակույթը, նախորդ դարերի համեմատ, ավելի միատարր է. նախորդ դարաշրջանում իրար կողքի գոյակցող ուրարտական և տեղական ցեղերի մշակույթների փոխարեն հանդես է գալիս մեկ ամբողջական, միատարր մշակույթ, որն էլ ապացույց է այդ մշակույթը կրող ժողովրդի միատարրության: Միաժամանակ չի բացառվում ներմշակութային բազմազանություն՝ կապված կա՛մ հնագույն ավանդների, կա՛մ քննարկվող դարաշրջանի պատմական իրադրության առանձնահատկությունների հետ: Ինչպես նշվեց, ուրարտական պետության սահմաններում ընդգրկված շրջանների (Արարատյան դաշտավայր, մերձսևանյան շրջաններ, Շիրակ և այլն), մշակույթներում պահպանվում, շարունակվում են ուրարտական մշակութային ավանդների, իսկ հյուսիսային, հյուսիս-արևելյան, հարավային շրջաններում՝ մ.թ.ա. VII-VIդդ. տեղական մշակույթին բնորոշ տարրերը: Մյուս կողմից՝ ընդգրկված լինելով աքեմենյան պետության կազմի մեջ, Հայաստանի մ.թ.ա. VI-IVդդ. մշակույթը ներառում է նաև ժամանակի համար առաջավոր այդ մշակույթի որոշ տարրեր: Թեև չպետք է մոռանալ հայկական ու իրանական մշակույթների ընդհանուր առաջավորասիական ակունքները, հատկապես ուրարտական, որոնք պայմանավորում են երկու մշակույթների որոշ ընդհանրությունները:

Այսպիսով, մ.թ.ա. VI-IVդդ. Հայաստանի բնակչությունը շարունակում է ապրել հնուց ի վեր բնակեցված իրենց հողերի վրա, նյութական մշակույթի տարբեր բնագավառներում պահպանելով իր մշակութային ավանդները: Այս հանգամանքը թույլ չի տալիս տեսնել որևէ խզում ժողովրդի մշակույթի ընթացքում և փնտրել «այլ մշակույթ»:

Մշակույթի անընդմեջ զարգացումը լավ նկատվում է հատկապես այն դամբարանադաշտերի նյութերի հիման վրա, որոնք գոյություն են ունեցել I հազարամյակի սկզբներից (Աստղի բլուր, Կարճաղբյուր, Կարմիր վանք, Ջուջևան, Բերդատեղ, Ռեղկին լագեր, Որնակ և այլն): Այս դամբարանադաշտերի մ.թ.ա. VI-IVդդ. թվագրվող թաղումները, դամբարանների ճարտարապետական կառուցվածքով, թաղման ծեսով և այն ուղեկցող արարողություններով, չեն տարբերվում դամբարանների վաղ խմբերից: Լայնորեն օգտագործվում են դամբարանները շրջափակող կրոմլեխները, դամբանաթմբերը, թեև տեղի է ունենում թաղման կառույցների որոշ պարզեցում. բարդ, շքեղ թաղման խուցեր, ինչպիսիք կային նախորդ դարերում, չեն հանդի-